ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

<<ՋՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

_28_ _օգոստոսի_ _2019թ._
ժամը _11[00]_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Թ. Խուրշուդյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Հ. Սախոյան (ԳՊ/ԳԱ)**
Գ. Ասլանյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Խալաթյան (ԳՊ/ԲԱ)
Ն. Հակոբյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Լ. Վարդանյան (ԳՊ/ՄՀմ)**

1. <<ՋՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ)՝ www.armeps.am կայքի միջոցով՝ 2019 թվականի օգոստոսի 26-ին ժամը 11[00]-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնվելիք աշխատանքի գնի և հայտ ներկայացրած մասնակցի մասին

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք աշխատանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	<<<<Ձեյթուն>> ուսանողական ավան>> հիմնադրամի ուսանողական հանրակացարանի և բակի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	11,500,000

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	sargismarianna@mail.ru	000099768

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տեղեկատվություն մասնակցի ներկայացրած հայտի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տեղեկատվություն հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկի մասին

4.1 Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը ներկայացված է ստորև.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող	ԱԱՀ	Ընդհանուր գինը

		շահույթի հանրագումարը)		
Չափաբաժին N 1				
1	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	8,600,000	0	8,600,000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. <<ՋՈՒԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

5.1 Մասնակցի զբաղեցրած տեղի մասին տվյալները ներկայացված է ստորև.

Մասնակցի զբաղեցրած տեղը	**Մասնակցի անվանումը**	**Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝**		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
Չափաբաժին թիվ 1				
1	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	8,600,000	0	8,600,000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Թ. Խուրշուդյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Սախոյան**
(ստորագրությունը)

_____ **Գ. Ասլանյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Խալաթյան**
(ստորագրությունը)

_____ **Ն. Հակոբյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ. Վարդանյան**
(ստորագրությունը)